

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
N 10/12

Քաղ. Երեւան

28 մարտի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Բաբայան, Ա.Հ. Աբգարյան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. մարտի 28-ի նիստում (արձանագրություն N 3.2) քննարկեց «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության ներկայացուցիչ Է. Նահապետյանի կողմից 2012թ. փետրվարի 21-ին ներկայացված «MyFi» (հայտի համարը N 20101887) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 107-րդ մասի 14-րդ կետը, համաձայն որոնց ապրանքային նշանի գրանցումն ենթակա է մերժման, եթե այն կարող է շփոթություն առաջացնել հայտի ներկայացման թվականի դրությամբ ՀՀ-ում կամ նրա տարածքից դուրս օգտագործվող ապրանքային նշանի նկատմամբ, որը դեռևս օգտագործման մեջ է գտնվում, պայմանով, որ հայտը ներկայացնելիս հայտատուն գործել է անբարեխիղճ: Հայտատուի գործողությունը համարվում է անբարեխիղճ, եթե հայտը ներկայացնելու պահին հայտատուն գիտեր կամ կարող էր իմանալ այդպիսի ապրանքային նշանի առկայության մասին: Տվյալ դեպքում հայտարկված «MyFi» ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է ամերիկյան «Delphi Technologies, Inc., Corporation Delaware 5725 Delphi Drive Troy Michigan 48098» ընկերության «MyFi» ապրանքային նշանին, որը գովազդվում է Ինտերնետի տարբեր կայքերում և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Բողոքում նշված է, որ «MyFi» նշանը հանդիսանում է «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության ենթաբրենդը, որն օգտագործվում է «ORANGE» բրենդի հետ համատեղ, ինչում կարելի է համոզվել լուսանկարից վերցված Հայաստանում տվյալ ապրանքի մուտքը

ներկայացնող տեսանյութից, որը ներկայացվել է ապրանքային նշանների բաժին, ինչպես նաև ինտերնետային կայքերից: Մինչդեռ Delphi Technologies ընկերության «MyFi» նշանն օգտագործվում է իր հիմնական բրենդի հետ համակցության մեջ:

Բողոքարկողը պնդում է, որ նման դեպքում շփոթություն տեղի չի ունենա: Նշված է նաև, որ «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության «MyFi» նշանը բավական ինտենսիվ և լայնորեն է գովազդվում ինտերնետային կայքերում, ուստի փաստորեն կարելի է ասել, որ ընկերության տեղեկացված լինելը «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» «MyFi» նշանի մասին նույնքան հավանական է: Նշված է նաև, որ նախապատվությունը պետք է տրվի «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության «MyFi» նշանին, քանի որ Delphi Technologies ընկերության «MyFi» նշանը ՀՀ տարածքում չի օգտագործվել և ներկայումս չի օգտագործվում, ի տարբերություն «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության «MyFi» նշանի, որը մուտք գործելուն պես լայն կիրառում և ճանաչում է գտել Հայաստանում և պահանջարկ վայելում հայ սպառողի մոտ:

Նշված է նաև, որ է «ORANGE» բառային եւ համակցված նշանները 2010թ. մարտի 1-ից համարվեցին հանրահայտ ՀՀ տարածքում, եւ 2011թ. նոյեմբերի 23-ին գրանցում ստացան ՀՀ Մտավոր սեփականության գործակալության Գրանցամատյանում որպես հանրահայտ նշաններ 47 եւ 48 գր. համարների ներքո:

Բողոքում նշված է, որ շնորհիվ «ORANGE» նշանի ՀՀ տարածքում հանրահայտ լինելուն, դրա հետ համակցվող յուրաքանչյուր նշան նույնչափ հայտնի է դառնում սպառողի համար: Բողոքարկողը արձանագրել է, որ երկու ընկերությունների կողմից «MyFi» նշանի ներքո առաջարկվող ապրանքների ու ծառայությունների տարբերությունը նույնպես վերացնում է սպառողի կողմից որևէ շփոթության հնարավորություն: «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերությունն օգտագործում է իր «MyFi» նշանը հիմնականում շարժական ինտերնետային ծառայությունների հետ կապված անլար մոդեմների եւ այլ սարքերի համար, մինչդեռ Delphi Technologies ընկերությունն օգտագործում է իր նշանը ավտոմեքենաներում տեղադրվող գվարձալի համակարգերի, մասնավորապես ռադիոընդունիչների համար: Գրանցված և Հայտարկված ապրանքային նշանների առաջարկվող ապրանքները նախատեսված են բոլորովին տարբեր շուկաների համար, այն է՝ «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության նշանն ուղղված է հիմնականում բջջային հեռախոսների սպառողների համար, մինչդեռ Delphi Technologies ընկերության նշանը նպատակաուղղված է ավտոմոբիլային շուկայի համար: Բողոքարկողը փաստել, որ Delphi Technologies ընկերության սպառողները դժվար թե շփոթեն այդ ընկերության կողմից արտադրվող «MyFi» նշանով մակնշվող

ապրանքները «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության «MyFi» նշանով մակնշվող ապրանքների ու ծառայությունների հետ, քանի որ դրանք բոլորովին այլ ապրանքներ են եւ նախատեսված են բոլորովին այլ շուկայի միանգամայն այլ նպատակներով կիրառման համար, ընդ որում տարբեր երկրներում: Բողոքարկողը նշել է, որ Նշանների եւ դրանց ներքո առաջարկվող ապրանքների միջեւ շփոթության լիարժեք վերացման նպատակով կրկնական փորձաքննությանն ուղղված նամակով խնդրվել է 9-րդ դասի ապրանքների ցանկում սահմանափակում մտցնել՝ հեռացնելով «ռադիո հեռարձակման հաղորդող եւ ընդունող սարքեր, ռադիո սարքեր եւ սարքավորումներ» ապրանքները:

Բողոքարկողը գտնում է, որ «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության կողմից «MyFi» նշանի գրանցումը հայտարկվող ապրանքների ու ծառայությունների նկատմամբ չի կարող վնաս հասցնել բոլորովին այլ ոլորտում օգտագործվող «Delphi Technologies» ընկերության «MyFi» նշանին:

Ամփոփելով իր բողոքը՝ խնդրում է հաշվի առնել բոլոր վերոհիշյալ փաստարկները և գրանցել 20101887 հայտով ապրանքային նշանը ՀՀ տարածքում հայտարկված դասերի բոլոր ապրանքների ու ծառայությունների նկատմամբ, բացառությամբ 9-րդ դասում հայտարկվող «ռադիո հեռարձակման հաղորդող եւ ընդունող սարքեր, ռադիո սարքեր եւ սարքավորումներ» ապրանքների:

Կոլեգիայի անդամը բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. փետրվարի 21-ին «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության ներկայացուցիչ Է. Նահապետյանի կողմից ներկայացվել է «MyFi» (հայտի համարը N 20101887) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոք: Նշվեց, որ ապրանքային նշանի գրանցումը մերժվել է «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետի և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 107-րդ մասի 14-րդ կետի համաձայն: Համառոտ ներկայացվեց մերժման հիմքը: Նշվեց, որ հայտարկված «MyFi» ապրանքային նշանը չի կարող գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է ամերիկյան «Delphi Technologies, Inc., Corporation Delaware 5725 Delphi Drive Troy Michigan 48098» ընկերության «MyFi» ապրանքային նշանին, որը գովազդվում է Ինտերնետի տարբեր կայքերում և որի մասին հայտատուն կարող էր իմանալ:

Կոլեգիայի կողմից ընդունելի է բողոքարկողի այն փաստը, որ հիշյալ ընկերությունների ապրանքային նշաններով մատուցվող ծառայությունները և մակնշված ապրանքատեսակները տարբեր են և ունեն սպառման այլ շուկա և սպառողները դժվար թե շփոթեն դրանք միմյանց հետ:

Ուսումնասիրելով ներկայացված նյութերը՝ կոլեգիան պարզել է, որ ամերիկյան ընկերության կողմից «MyFi» ապրանքային նշանի գրանցման հայտը ներկայացվել է ամիս ու կես ավելի վաղ առաջնությամբ, քան բողոքարկողի հայտը և դժվար թե այդ ժամանակահատվածում բողոքարկող ընկերությունը տեղեկացված լիներ այդ հայտի մասին, և կարելի է ասել, որ մեծման հիմքը այս դեպքում կիրառելի չէ և չի կարող բողոքարկողի գործողությունը համարվել անբարեխիղճ և առաջարկեց բողոքը բավարարել:

Բողոքարկման խորհուրդը, ընդհանուր վերլուծության արդյունքում, եկավ այն եզրակացության, որ բողոքարկողի փաստարները համոզիչ են և սպառողը չի կարող շփոթել «MyFi» (հայտի համարը N20101887) և «MyFi» ապրանքային նշանները, քանի որ հիշյալ ընկերությունների ապրանքային նշաններով մատուցվող ծառայությունները և մակնշված ապրանքատեսակները տարբեր են և ունեն սպառման այլ շուկա :

Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Չեղյալ ճանաչել N 20101887 գրանցում ունեցող «MyFi» ապրանքային նշանի գրանցման մեջ նշված ապրանքների և ծառայությունների պահպանության տրամադրման նախնական մերժման մասին Գործակալության 16.08.2011թ. և կրակնական փորձաքննության՝ 23.11.2011թ. որոշումները, պահպանություն տրամադրել «MyFi» ապրանքային նշանին հայտարկված ապրանքների և ծառայությունների համար, բացառությամբ 9-րդ դասի «ռադիո հեռարձակման հաղորդող և ընդունող սարքեր և սարքավորումներ» ապրանքներից:

Բողոքարկման խորհրդի

Նախագահ

Ա. Ազիզյան